# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՁ Վազգեն Հովսեփյան-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | փիրուզագույն, կարճաթև | - | Սվիտերներ / Շապիկ | ԱՁ Վազգեն Հովսեփյան | Շապիկ փիրուզագույն, կարճաթև - Գործվածքըч տրիկոտաժ, 100+/-2% բամբակ բաղադրությամբ, մակերեսային խտությունն առնվազը 180 գրամ, գույնը՝ փիրուզագույն, կտորի գույնը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը՝ ուղիղ ձևածքով, կարճաթև, կլոր օձիքով՝ վզամասը մշակված տրիկոտաժե էլաստիկ մանժետով: Թևքերի երկարությունը ուսի միացման կարի կենտրոնական հատվածից 2-րդ հասակային խմբի համար 22-23սմ, յուրաքանչյուր հաջորդ խմբի համար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ավելանում է 1սմ: Ուսամասերն ամբողջությամբ վրակարված են համազգեստի գործվածքով (մակերեսային խտությունը` 220±5 գրամ/մ2, բաղադրությունը` 65±2% պոլիէսթեր, 35±2% բամբակ, գործվածքի տեսակը` <<TWILL>>, ներկման մեթոդը` <<Ռեակտիվ>>, գույնը` փիրուզագույն): Թևքերի միացման կարերի մեջից մշակված են 4.5-5սմ լայնությամբ կամրջակներ` համազգեստի գործվածքից, 7X5սմ չափսի կոչման տարբերանշանի անցկացման համար: Կամրջակների եռանկյունաձև ծայրերը կոճկվում են մետաղական կոճգամներով: Շապիկի մեջքի կենտրոնական հատվածում` օձիքի միացման կարից 13սմ հեռավորությամբ, բեժ գույնի թելով, 4X2.5X0.7սմ (բարձրություն X լայնություն X հաստություն) չափի տառատեսակով ասեղնագործված է «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Ձախ թևքին ուսագլխից 7սմ ներքև ասեղնագործված են տարբերանշաններ` ՀՀ եռագույն դրոշը` 7սմ լայնությամբ և 3,5 սմ բարձրությամբ, ներքևում գրված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ աջ թևքի կենտրոնում Փրկարար ծառայության տարբերանշանը, որի գույները Պատվիրատուն տրամադրում է մինչև մատակարարումը, իսկ Մատակարարը՝ տարբերանշանի նմուշը նախապես համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: Բոլոր տարբերանշանները կարվում են տարբերանշանի վրա ասեղնագործված եզրակարերին համապատասխան գույներով (բեժ): Չափսերը և կոչման տարբերանշանները կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից, յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետից 1 ամիս առաջ: Շապիկի ներսի կողմից՝ ստորին հատվածում կարվում է պիտակ վրան նշված չափսը, արտադրողի անվանումը և խնամքի պայմանները: Կոչման տարբերանշանը արտադրվում է համազգեստի գործվածքից /փիրուզագույն/ ՝ հանովի օղագոտու տեսքով: Արտաքին չափսերը՝ 7X5սմ: Թույլատրելի շեղումը +/- 2%: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Աստղերն ասեղնագործված բեժ գույնի թելով, հնգաթև, ուռուցիկ, 13 և 20մմ տրամագծերով: Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ-ոց աստղեր: Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա 13մմ-ոց: Աստղերը պետք է տեղակայվեն հետևյալ կերպ՝ Գնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: Մայոր – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղի կենտրոնը 45մմ: Կապիտան – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 20մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը 20մմ հեռավորությն վրա՝ երրորդի կենտրոնից: Ավագ լեյտենանտ – տարբերանշանի |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИП Вазген Овсепян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱՃԱ ԳՁԲ-ԱՐՆ-23/22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 20մմ, երկրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից: Ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25մմ, երկրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից: Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն ուղղահայց դիրքով: Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն հորիզոնական դիրքով: Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Շարքային – դատարկ: Փաթեթավորումը պիտակավորված անհատական պարկերով՝ վրան նշված տեսականու անվանումը, չափսը, արտադրողի անվանումը: Մատակարարված ապրանքի ողջ խմբաքանակը պետք է համապատասխանի նախօրոք |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներկայացված նմուշին: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ՝ տրված արտադրողի կողմից: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային խտության, ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպությունից: Մինչև մատակարարումը մատակարարը պարտավոր է ամբողջական ապրանքի նմուշը համաձայնեցնել Պատվիրատուի հետ |